

# ՀԱՄԱՇԵՆՆԱԿԱՆ

«ՀԱՄՇԵՆ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Անվճար

Շարունակում ենք անդրադառնալ իսլամաց(վ)ած հայերին նվիրված Ստամբուլի գիտաժողովին

Ռոբեր Քոփթաշ  
«Ակօս» թերթի գլխ. խմբագիր

## Իսլամացած հայերի միջոցով հայկական ինքնության փորձությունը



Իսլամաց(վ)ած հայերի վերաբերյալ [2013 թ.] նոյեմբերի 2-4 գիտաժողով տեղի ունեցավ: Թուրքիայից և աշխարհի տարբեր երկրներից եկած մասնագետները այս խառը խնդիրը ուսումնասիրեցին տարբեր տեսանկյունից՝ լույս սփռելով և՛ անցյալի, և՛ ապագայի վրա: Ենթան մեզ հնարավորություն է տալիս հայերի և հայկական ինքնության տեսանկյունից ամբողջովին նոր հարցեր բարձրացնել:

Նախ պետք է հաստատենք, որ պատմականորեն հայերը բռնի են ընդունել իսլամ (բացառություն են կազմում կամովին իսլամ ընդունելու մի քանի օրինակները): Իսլամադավան խմբերի կողմից Անատոլիայի գրավումից հետո տարբեր ժամանակաշրջաններում և, բնականաբար, ցեղասպանության ընթացքում բազմաթիվ հայեր բռնի և ճնշման տակ ընդունել են իսլամ:

Հատկապես 1915 թ. մարդիկ կենդանի մնալու, իրենց ընտանիքների կյանքը փրկելու համար իսլամ են ընդունել: Հետագայում, երբ իրավիճակը փոքր ինչ հանգստացել է, եղել են դեպքեր, երբ մարդիկ իրենց իսլամական կրոնին են վերադարձել, սակայն որոշ դեպքերում, քանի որ վտանգը երբեք չի վերացել, շարունակել են ապրել որպես մուսուլման՝ թաքցնելով իրենց իրական կրոնն ու ինքնությունը: Այդ մասին չեն հայտնել անգամ իրենց երեխաներին:

Հարցի վերաբերյալ երկրորդ հիմնական հավաստումն էլ այն է, որ հայկական ինքնությունը դարեր շարունակ քրիստոնեության և եկեղեցու հետ է նույնացվել: Այո, հայերը գոյություն են ունեցել մինչ քրիստոնեությունը, երբ Անատոլիայում և Կովկասում իշխում էր բազմաստվածությունը, հայերի նախնիները ևս բազմաստված էին: Հայկական ապրելակերպը, մշակույթն ու լեզուն գոյություն են ունեցել եկեղեցուց շատ ավելի առաջ, սակայն եկեղեցին հայերի կյանքում այնքան կարևոր դեր է խաղացել, որ սկսած 4-րդ դարից, երբ քրիստոնեությունը ընդունվել է հայկական թագավորության պետական կրոն, հայու-



թյունն ու քրիստոնեությունը գրեթե համարժեք են դարձել:

Եկեղեցին դարձել է ոչ միայն պարսկական, արաբական, բյուզանդական, օսմանյան հզոր գերիշխանության դեմ հայերի «ազգային» ինքնությունը պահպանելու վահան, այլև ստանձնել է հայկական մշակույթի այդ թվում նաև այբուբեն, լեզու, արվեստ և գրականություն, գլխավոր արարչի դերը: Անցած 1700 տարիների ընթացքում, երբ պատմության հարթակից բազմաթիվ քաղաքակրթություններ են ջնջվել, ի հեճուկս բոլոր դժվարությունների եկեղեցին դարձել է հայկական ինքնության համար պայքարելու և շարունակելու շարժիչ ուժը՝ այսպիսով հայերի գիտակցության մեջ զբաղեցնելով միակ տեղը:

Այս միակը լինելու ամենատղուկ արդյունքներից մեկն այն է, որ եկեղեցին շատ ակտիվ դեր է խաղացել հայկական գաղափարական մտքի ձևավորման մեջ: Եվ, բնականաբար, եկեղեցին իր այս դերն օգտագործել է յուր շարունակականությունն ապահովելու համար: Այսինքն՝ այն միտքը, որ հայ եկեղեցին ու հայկականությունն անբաժանելի են, անգամ նույն են, մշտապես իշխել և համընդհանուր ընդունված իրականության է վերածվել:

### Լարվածություն և հնարավորություններ

Երբ իսլամացած հայերի խնդիրն նայենք այս երկու հիմնական սկզբունքի տեսանկյունից, ապա կնկատենք մի շարք խնդիրներ ու լարված բնագավառներ, որոնց պետք է նայել խնդրի կարևորությունից բխող սառնասրտությամբ ու օբյեկտիվորեն, և այդ դեպքում լարվածությունը կարելի է վերածել հնարավորության: Ի հակադրություն այս ամենի՝ վախից սկիզբ առնող հակազդող մոտեցումները կարող են առկա խնդիրներն էլ ավելի խորացնել: Այսօր հայկական ընկալման մեջ գոյու-

թյուն ունեցող տեսակետը՝ «հայկականությունը հավասար է քրիստոնեությանը», կարող է խոչընդոտել Թուրքիայի համեմատաբար ազատականացված միջավայրում ձայները ավելի լսելի դարձած իսլամացած հայերի և հայկական ինքնության փորձագրությունը, սակայն ընդունված այն տեսակետը, թե քրիստոնյան կարող է հայ լինել, վերածվում է գրահի, որը դուրս է թողնում այն մարդկանց, ովքեր տասնյակ տարի շարունակ ծանր ճնշումների մթնոլորտում մեկ այլ ինքնությամբ են ապրել կամ ստիպված են եղել այդպես ցույց տալ:

Որոշ իսլամաց(վ)ած հայեր անցյալի համեմատ շատ ավելի բաց են հայերի և հայկական ինքնության հետ հարաբերություններ հաստատելու համար: Նրանցից ոմանք ակտիվ խոսում են այդ մասին, ոմանք էլ որոշ տազնայների ազդեցության տակ թեև պասիվ են, սակայն հարաբերություններ հաստատելու համար բոլոր կամուրջները չեն այրում: Սակայն կա մի իրականություն, որը չպետք է աչքաթող անել. թեև իսլամաց(վ)ած հայերի շրջանակներում կան ոմանք, ովքեր ցանկանում են վերադառնալ քրիստոնեության գիրկը, նրանց կողքին կա նաև մի խումբ, որը հասկանալի պատճառներով չի մտածում քրիստոնյա դառնալու մասին, ցանկանում է իր կյանքը շարունակել որպես մուսուլման:

### Խնդրահարույց նախընտրություն

Նման պարագայում կա մի հանգամանք, որը պետք է հաշվի առնեն և՛ հայ քաղաքացիները, և՛ եկեղեցին. կապ չունի՝ ուզում է վերադառնալ քրիստոնեության գիրկը թե ոչ, կան մարդիկ, ովքեր ապրել են մուսուլմանի ինքնությամբ, սակայն անցյալում նրանց պապերն ու տատերը հայ են եղել, և երևում է՝ նրանց թիվը գնա-

լով աճում է: Բնականաբար նախընտրության հարց է՝ երես թեքել այս իրականությունից, որպես հայ չընդունել մարդկանց, ովքեր կապ չեն ունեցել առօրյա կյանքում ստանդարտ համարվող հայկականության նորմերի հետ, իրենց ինքնությունը չեն կապում եկեղեցու հետ: Սակայն այս ընտրությունը չափազանց խնդրահարույց է թե՛ մարդկային, թե՛ պատմական, թե՛ քաղաքականության տեսանկյունից:

Հայկականության վերաբերյալ մեր ընդունած չափորոշիչները մի կերպ պարտադրել այն մարդկանց, ովքեր ասում են «ես մուսուլման եմ, սակայն հայ եմ», «մուսուլման եմ, սակայն ուզում եմ քրիստոնյա դառնալ» և անգամ «մուսուլման եմ երևում, սակայն անհավատ եմ, սա իմ նախընտրությունն է, քրիստոնյա դառնալ էլ չեմ ցանկանում, սակայն հայ եմ», ասել է թե՛ նրանց վանել, արդյունքում ստեղծվում է հայկականությունը մեր մենափորձության մեջ առած ուժեղ հարաբերություն, որն էլ, վերջապես, հայկական ինքնությունը ամլացնող մոտեցումն է:

Գիտեմ, որ լինելու են մարդիկ, ովքեր ելնելով այն տեսակետից, թե հայկական ինքնությունը կարող է սահմանվել միայն քրիստոնեությամբ, դեմ են արտահայտվելու ասածներին, սակայն ուզում են նրանց հիշեցնել, որ անգամ հայ եկեղեցու հոգևոր կենտրոն հանդիսացող Էջմիածինը մուսուլման հայերի նկատմամբ շատ ավելի անկեղծ դիրքորոշում է որդեգրել:

Ըստ տեղեկության, որն արժարժվել է Հրանտ Դինք հիմնադրամի կազմակերպած Իսլամաց(վ)ած հայերը գիտաժողովի շրջանակներում և որը տեղ է գտել Լոռեյի Ռիթորիկ և Մաքս Սիվազյանի «ՍՎԻՆԻ» մնացորդները. Թուրքիայի ծայտյալ և իսլամացած հայերը» գրքում, Էջմիածնի կաթողիկոսարանը հեղինակների՝ հայկական ինքնության և մուսուլման հայերի հարաբերությունների վերաբերյալ հարցին պատասխանել է. «Ազգի սահմանման ընդունված ընդհանուր չափորոշիչներից են էթնիկ ծագումը, համատեղ հայրենիքի գաղափարը, լեզուն, պատմությունը, մշակութային ժառանգությունն ու կրոնը: Որոշ դեպքերում կարող են այս չափորոշիչներից մի քանիսը բացակայել: Պատմական պատճառներով մարդիկ, ովքեր լեզուն չեն սովորել, չգիտեն իրենց պատմամշակութային ժառանգության մասին, չեն կարող հետևել իրենց կրոնին, չալետք է դուրս մնան հայկական ինքնությունից»:

Երևում է, որ Էջմիածինը հասկանում է, թե որքան նուրբ և զգայուն խնդիր է: Ցանկանում ենք, որ այս խորաթախանցությունը ցուցաբերեն նաև հայկական բոլոր շրջանակները: <http://www.agos.com.tr/makale.php?seo=ermeni-kimliginin-musliman-ermenilerle-imtihani&detay=699>

Թարգմանեց Անահիտ Քարառշյանը  
Akunq.net

Ույզար Գյուլթեքին

Թուռները միասին դարձան գտան

Գիտաժողովի ամենաուշագրավ հանդիսություններից մեկը թոռների հանդիպումն էր: Առաջին անգամ իրենց իսլամացված բարեկամների պատմությունները իրար հետ կիսելու համար հավաքված թոռները հոգեբան Ժուլիոյե Արալի ղեկավարած նիստի ժամանակ հնարավորություն ունեցան տարիներ շարունակ լռության մատնված իրենց պատմությունները պատմել, կիսվել:

Մամուլի և մյուս մասնակիցների համար դժնդակ այս հատուկ նիստի ավարտին Ժուլիոյե Արալը շեշտեց, թե տեղի ունեցած տրավմաները հաղթահարելու համար որքան կարևոր է պատմելը: «Ըստ էության տրավման անձնային մակարդակում շատ դժվար է հաղթահարել, վնասը շատ մեծ է: Շատ դժվար է որպես գաղտնիք պահելը»: Հոգեբանը խմբակային հոգեբանական թերապիայի դրական ազդեցության մասին ասաց: «Ժողովրդի մեջ տարածված է «մարդը մարդուն կղարմանի» ասույթը, ըստ էության թերապիայի ընթացքում հաճախորդն անընդհատ ինքն է խոսում, երբ իր ծայնն ակնառիչ է հասնում, բոլորովին այլ է լինում: Կարողանում է լսել և հասկանալ: Շատ կարևոր է ազատվել սիրտը մղկտացնող ցավից: Շատ ավելի կարևոր է, որ այս ամենը կատարվի խմբակային: Խուսմբը ամոքող հատկություն ունի: Պատկանել որևէ խմբի: Այս թերապիայի ժամանակ դա տեղի ունեցավ»:

Ընդունեցին, մաքրվեցին

Արալը նշելով, թե շատ կարևոր է, որ հայերը կապ չունին մուսուլման է թե ոչ, այս հանդիպման ժամանակ իրենց տեսնեն և ընդունվեն: «Շատ կարևոր է իրավիճակը, որտեղ բոլորս բաժին ունենք: Թեև ասում ենք, որ այս հանդիպումը թերապիա է, սակայն շատ կարևոր է, որ մասնակիցներն ազատվում են այն ցավից, որը սիրտը կտոր-կտոր է անում»: Արալն այնուհետև հավելելով, որ կանանցից ու տղամարդկանցից բաղկացած 20-60 տարիքային խառը խմբում մարդիկ թույլ տվեցին, որ զացմունքները գլուխ բարձրացնեն, ընդգծեց նաև միասին լացելու և ծիծաղելու ուժը:

Արալը շեշտելով, որ օրերից մի օր իր հայ լինելու մասին իմանալուց հետո ձեռք բերած տրավման շատ ծանր է լինում



տվյալ մարդու համար, ասաց. «Կարծես ուղեբերիդ տակից հողը փայխի: Մենք ինքնուրույն զգացում ունենք: Երբ ցանկանում ենք ինքներս մեզ ներկայացնել, այդ մակդիրներն ենք օգտագործում և մեկ էլ միանգամից տեսնում ենք, որ այդ մակդիրներն ու անկանները տակնուվրա են եղել, փոխվել են»: Ըստ մասնագետի՝ որևէ խմբի պատկանելու զգացումը շատ կարևոր է, և երբ այն սկսում է խախտվել, մարդն ինքն իրեն կորցնում է: «Ինչպե՞ս ենք խախտված պատկանելության զգացումը փոխարինելու նորով: Փոխարինել միայնակ, թե՛ միասին ենք կատարելու: Ընդունվում ենք, թե՛ դուրս ենք մնում»:

Արալը շեշտելով, որ ինքնությունն, ըստ էության, փոխանցվում է սերնդեսերունդ, ասաց. «Անգամ ամենալուրջ ընտանիքում որոշ բաներ, որոշ արժեքներ են փոխանցվում, որոնք ազդում են ինքնագնահատականի դիմամիկայի և համակարգի վրա: Եվ երբ սկսում են քննարկվել այդ փոխանցված արժեքները, ճնշման տակ կեղտոտ ջուրը թափելու է ֆեկտ է ունենում: Սկսում են մաքրվել: Ֆեթիե Զեթինի գիրքն այս գործընթացի վառ օրինակն է:

«Մեծ մայրս» գիրքը հասարակության մեջ առաջացած խցանումը, աղտոտումը, ցավը ճնշման տակ բացեց և շարունակվեց: Այդ գրքից, նման գրքերից հասանք մինչև այսօր: Մի տեղից ճաք տվեց և շարունակվեց»:

Արալը նշելով, որ տարբերությունն ընդունելու դեպքում հանգստությունն ավելի է ամրապնդվում, վերջում շեշտեց այն քայլը, որը հրաշք է գործում. «Նախ պետք է սկսենք ընդունելով: Բոլորի պես պետք է ընդունենք: Սիա այդ ժամանակ նաև ազատություն ձեռք կբերենք»:

Տեսանք, թե Մելիա ացեդարախի (հիմալայան) տնկին արագ մեծանալով ինչպես ծաղկեց

Փակ դռների հետևում տեղի ունեցած հանդիպման ավարտին թոռների պատրաստած տեքստը հասարակությանը ներկայացրեցին գիտաժողովի վերջին նիստի ժամանակ: Զգացմունքային տեքստում կարդում ենք. «Թուրքիայի տարբեր նահանգներից 20-65 տարեկան 9 արական և 8 իգական սեռի ներկայա-

ցուցիչների մասնակցությամբ «Իսլամացված» հայերի երեխաներն ու թոռները» խորագրով խմբակային աշխատանք կատարվեց:

Մեր կորած հայրական և մայրական կողմի տատիկներին, պապիկներին, մայրերին ու հայրերին բերեցինք այստեղ, նրանցից ոմանց իսկական անունն անգամ հայտնի չէ: Պատմեցինք մեր պատմությունները, կիսեցինք մեր ցավերը: 3 օր շարունակ տեսանք, որ միայնակ չենք: Երջանիկ ենք: Երբ խոսեցինք, նվազեցին թուրք-հայ, քուրդ-հայ, քրիստոնյա հայ-մուսուլման հայ, ասորի տարբերությունները:

Որպես մի խումբ, որտեղ բոլորը կիսում են նույն ցավը, միասին լացեցինք, սգացինք և տեսանք, թե ինչպես պոկված համրիչի (թզբեհ) հատիկները հավաքվեցին, և Մելիա ացեդարախի տնկին, արագ մեծանալով, ինչպես ծաղկեց:

Հասկացանք, որ մեր այս միայնությունը կարող ենք հաղթահարել, երբ առանց վախենալու ասենք, թե ով ենք մենք, ինչ ենք կորցրել, բացահայտենք նրանց տառապանքն ու մեր կորուստը:

Ըստ էության՝ 3 օր տևած այս աշխատանքները մեզ հանգստացրեցին: Թող շատ ավելի պատմություններ պատմեն, այս տարբերություններին վերջ դնենք կամ էլ ընդունենք, որ տարբեր ենք: Եվ խիղճ ունենանք, որ այլևս չկրկնվի:

Մենք՝ միջանկյալ դիրքում գտնվողներս, սպասում էինք, որ քրիստոնյա հայերը մեզ կնկատեն և իրենց գիրկը կառնեն, սակայն հասկացանք, որ այլևս միայնակ չենք: Այսօրն էլ եկավ: Այն, որ մեր ընկերները, ովքեր ունեն նույն արմատները, որը մենք նոր ենք հայտնաբերել, որի մասին նոր ենք իմացել, մեզ «տաճիկ» էին անվանում, ստիպում էր մեզ արհամարհված ու նվաստացած զգալ:

Երբ բոլորս, ինչպես նաև մեզանից տարբերվողների հետ, սկսեցք միասին սգալ, լացել, միասին կարող ենք նաև ծիծաղել: Մեր ապաքինման գործընթացն այդպես է սկսելու:

uygargultekin@agos.com.tr  
http://www.agos.com.tr/haber.php?seo=torunlar-bir-arada-sifalandi&haberid=6107  
Թարգմանեց Անահիտ Քարաաշյանը  
Akunq.net

Կարին Քարաքաշլը

«Այդտեղ որևէ մեկը կա՞»

Ասոցիացիան վտանգավոր փոխադրամիջոց է, որը պատճառ է դառնում, որ մի պահ վերանաք ժամանակի և տարածության մեջ: Հայտնի չէ, թե ուր կհասնեք, բայց եթե մի անգամ նրա շնորհիվ ճանապարհ եք ընկել, ուրեմն անպայման որևէ իմաստ կրում է այդ ճամփորդությունը: Դուք նույնիսկ չեք հասկանա, թե ինչ է կատարվում այդ պահին:

Հրանտ Դինքի անվան հիմնադրամի կազմակերպած «Իսլամացած հայերը» թեմայով խորհրդաժողովն ասոցիացիաների մի տեղատարափ էր առավելապես: Իրենց լեզուն, կրոնը, անունը մոռացած, իրենց ընտանիքներից և երկրից պոկված, տառապանքներով լի մի սերնդի թոռները, ծոռները երբ մեկտեղվեցին, սկզբում կակազելով, ապա՝ հետզհետե ավելի բարձրագոյ լեզվով սկսեցին խոսել՝ այդքան տարվա լռությանը հակառակ: Ներկայացվող փոքրիկ մարդու պատմություններին դեմ-հանդիման՝ շողարձակեցինք ամեն անգամ:

Խորհրդաժողովի ամենաբուռն քննարկումների թեմաների մեջ գլխավորը հիշողության և ինքնության խնդիրն էր անշուշտ: Այդպես է. երբ բռնի կերպով են քեզ լռեցրել, ստիպել, որ ինքը ժխտես սեփական գոյությունը, ուրեմն հուշերդ էլ են բռնության ենթարկվել: Եվ ինքնությունդ միշտ «արդյո՞ք»-ի հետ է ուղեկցվում:

Խորհրդաժողովի ընթացքում մի պահ ինձ թվաց, թե լսում եմ Մարմարայի երկրաշարժի ժամանակ ավերակների միջից

լսվող «Այդտեղ որևէ մեկը կա՞» ճիչը: Հասցեատեր էր որոնում ձայնը, ուզում էր, որ հավատան իրեն, և ինքը կարողանա ասել՝ «Ես կամ»:

Խորհրդաժողովի վերջին օրը Ռոբեր Քոփթաշի նախագահությամբ կայացած կլոր սեղանի քննարկումը լեցուն էր խիստ ուշագրավ տվյալներով՝ ոչ միայն պոլսահայ համայնքին և հատկապես պատրիարքարանին փորձարկող ոչ քրիստոնյա հայերի փաստերի, այլ նաև՝ հայկական ինքնություն ունեցող մահմեդականների և հավատաթույլ շրջանակների միջև արձանագրվող քննության տեսանկյունից: Աստվածաբան Հրոյեթ Շեֆթաթի Թուքսալը որպես ներքին բանավեճ իր ձայնի մեջ արտացոլվող անկեղծ ցավով ցույց տվեց, թե կոտորածի հետագա նախանշանները ինչ են արժեցել նման հայերին: «Այստեղի հայերին լռության պատիժն է տրվել: Որքան դաժան բան է դա: Եկեք բոլորով միասին վերացնենք այդ պատիժը: Պետք է ցավերի հանդեպ հարգանք տածել և հնարավորություն ստեղծել, որ նրանք խոսեն»:

Կորածն էլ հենց դա էր՝ ձայն... Ապրիլի 24-ի գիշերը հայ համայնքի մոտ 250 մտավորականները, երբ մի հսկայական գործողության միջոցով ձեռքբերվելով՝ անվերադարձ աքսորվեցին դեպի Չանքըրը և Այաշ, ըստ էության առանցվեց մի ողջ ժողովրդի ձայնը: Այնուհետև զուգազուլպայից քաշված թելի պես՝

Անատոլիայի (Արևմտյան Հայաստանի-Ակունքի խմբ.) չորս կողմում կանայք, մանուկներն ու ծերերը անթաղ ոսկորների էին վերածվելու այդ աքսորի ճանվանների մի կետում՝ սովից, հարձակումներից և հիվանդություններից կոտորվելով:

Ցեղասպանությունը չի սահմանափակվել միայն Անատոլիայի մի հինավուրց ժողովրդին արմատախիլ անելով. այն կյանքից զրկել է նաև հետագա սերունդներին: Նաև հանրապետության՝ ոչ մուսուլման փոքրամասնությունների նկատմամբ վարած խտրական քաղաքականության ազդեցությամբ հայ համայնքի ձայնը կտրվել է, մի ծպտուն իսկ չի կարողացել արտաբերել:

Իսկ այդ լռությունը խախտել ցանկացող մարդը սկսել է ձայն հանել 1990-ականների կեսերից սկսած: Հրանտ Դինքի ձայնը, առանց քենի, սակայն այլևս ժխտելու հնար չթողնելով, շալակել է այդ պատմությունը: Որքան դառը հեզանք է, որ նրա ձայնը ևս ցածրացնելու ուղղությամբ համակարգված գործողություններ մեկնարկեցին՝ Աթաթուրքի հոգեդուստր և առաջին կին ռազմական օդաչու Սաբիհա Գյոքչենի հայ լինելու վերաբերյալ ենթադրություններ պարունակող հրապարակումից հետո:

Այնինչ, Հրանտ Դինքը Սաբիհա Գյոքչենի՝ ողջ մնացած և որդեգրված մի հայ որբ աղջիկ լինելու մասին ենթադրության միջոցով երազում էր, որ 1915-ը կարողանա ազատագրվել այդ բանտարկված

լռությունից: Առանց հանձնվելու թվերի անհաճո մրցակցությանը, մրցաշարի կերպարանքով անգիր արված քարոզչությանը՝ ապաքինվելու էինք՝ իրար լսելով:

Այն օրը, երբ այս հողերի կորուստը թոռները, ծոռները մեկտեղվեցին, իրականություն դարձավ տարիներ առաջ եղած մի երազանք:

Իսկ իրականացված այդ առաջին քայլը երազած մարդը, այդ ամենավերջին, ամենաթանկան ձայնը, ինչպես հայտնի է, սպանվեց, լռեցվեց: Բայց արի ու տես, որ այդ ձայնը շարունակում է արձագանքել երկնքում: Եվ իրականում անընդհատ նույն հարցն է տալիս բոլորիս. «Այդտեղ որևէ մեկը կա՞», «Իմ ձայնն անսացող կա՞»...

-Այո՞,- ասացինք այդ օրը,- այստեղ ենք, լսում ենք: Ավելին, լսում ենք միմյանց: Թեև անհետացած ոչ ոք, ոչ մի բան հետ չի գա, սակայն այսօր ի հայտ եկավ անցյալի իջնող հոգիներին սիրով փարվելու, տարբերվող ինքնություն կրողների և սովորական ինքնության կաղապարները հարկադրող ներկայիս մարդկանց գրկախառնվելու հնարավորությունը: Եվ Աստված է վկա, թե որքան շատ բան արժե այդ հնարավորությունը փորձարկելը: <http://www.agos.com.tr/haber.php?seo=karin-karakasi-yazdirada-kimse-var-mi&haberid=6078>

Թարգմանեց Մելինե Անույանը  
Akunq.net

Խոսում են  
Թուրքիայի համշնչիները

Թուրքիայում բնակվող համշնչիները մտավորականների հետ պատմ. գիտ. թեկնածու, թուրքագետ Մելինե Անուրանի հարցազրույցը, որը տպագրվել է Մոնրեալում (Կանադա) հրատարակվող հայկական «Հորիզոն» թերթի 2014 թ. հունվարի 21-ի համարում, կարդացվում է մեծ հետաքրքրությամբ, քանզի Թուրքիայի համշնչիների խնդիրներին են անդրադառնում հենց իրենք՝ համշնչիները: Նրանց արտահայտած որոշ մտքերի, մեկնաբանությունների, գնահատականների հետ համաձայն չլինելով, այնուամենայնիվ որոշեցինք հարցազրույցն արտատպել առանց խմբագրական միջամտության: Միակ պարզաբանումն անում ենք հարցազրույցի մասնակիցներից մեկի խոսքում երկու անգամ հիշատակվող 1778-79թթ. ռուս-թուրքական պատերազմի վկայակոչման համար, ընթերցողներին տեղեկացնելու, որ այդ թվականներին ռուս-թուրքական պատերազմներ տեղի չեն ունեցել, դրանք եղել են ավելի վաղ և ավելի ուշ: Ս. Վարդանյան



ՀԻՔՄԵԹ ԱՔՉԻՉԵՔ

նաև որ ընկերությունում որպես ֆինանսների ղեկավար:

2005 թ. Խոսքի Համշնչական մեդիաները ժողովելով՝ իմ ընկերների հետ «Վոլա» (Համշնչի բարբառով նշանակում է «Ո՞վ է» Մ.Ա.) անուամբ մի երաժշտական ալյում ենք թողարկել, որը համայն աշխարհում Համշնչերենով պատրաստված առաջին երաժշտական ալյումն է: Ներկայում գրադուած են երկրորդ ալյումի պատրաստման աշխատանքներով:

**ԶԵՄԻ ԱՔՍՈՒ-** Աւարտել են Սթամբուլի Բիլգի համալսարանի փլիլիսոփայության բաժնի մագիստրատուրան: Արդվին նահանգի Խոսքիում ապրող համշնչիներից են: 2008 թ. մի խումբ ընկերների հետ միասին սկսեցի հրատարակել «Բիրյաշամ» ամսագիրը: Հանդեսը որոշ ժամանակ անց փակուեց, բայց ես շարունակում եմ տարբեր թեմաներով ուսումնասիրություններ անել: 2013 թ. հրատարակուեց իմ յոթուածը՝ Արդվինի հայերի վերաբերեալ («Թարիի վէ թոփլում», թիւ 16): Համշնչիների մասին մի յոթուածս էլ տպագրուեց «Թոփլումսալ թարիի» հանդէսում (2013 թ. Օգոստոս):

**ԱՍՍԱՆ ԶԱՆՁՆ-** Անունս Ասլան Զանջը է: Ծնուել եմ 1964 թ. Յունիսի 3-ին Արդվին նահանգի Խոսքի գաւառի Քեմալիաշա գաւառակի Չամուրլու (Չանչախանա/Չոնչախան/Չոնչաղոն-Մ.Ա.) գիւղում: 1988 թ. աւարտել եմ Սթամբուլի համալսարանի Տնտեսագիտութեան ֆակուլտետի միջազգային յարաբերութիւնների բաժնը: Աշխատում եմ Խոսքի քաղաքապետարանում:

**ՄԵԼԻՆԷ ԱՆՈՒՄԵԱՆ-** Ինչպէ՛ս կարող էք սահմանել համշնչական ինքնութիւնը: Ո՞վ է համշնչին, համշնչահայերի քանի՞ խմբեր կան, եւ ո՞ր վայրերում են բնակուում այդ խմբերը:

**ՀԻՔՄԵԹ ԱՔՉԻՉԵՔ-** Մենք՝ Թուրքիայում ապրող համշնչիներս, համշնչի լինելն ընկալում ենք որպէս մեր հարեւան լազերից, վրացիներից, յոյներից եւ քրդերից առանձնացող մի մշակույթ, առանձին ժողովուրդ, առանձին էթնիկ ինքնութիւն: Սակայն, չնայած այդ ընկալմանը, թրքաբնակ համշնչիների մեծ մասը համշնչականութիւնը իրացրել է որպէս ներքին ինքնութիւն, իսկ իրեն էթնիկ առումով համարում է թուրք ազգի մի մասը:

Համշնչիները գիտականորէն բաժանուում են 3 խմբի:

Արեւելեան Համշնչիներ. Արդվինի Խոսքի եւ Բորչկա գաւառում ապրող համշնչիները: Սիւն խմբի որոշիչ տարրը, խումբ, որի մէջ ընդգրկուած են նաեւ ես, համշնչերենի մայրենի լեզու լինելն է եւ ներկայում առօրեայ կեանքում կիրառուելը: Թէեւ վերջին 10-15 տարում համ-

# Համշնչն ու համշնչահայերը. ներկայացնում են համշնչի մտաւորականները

## Հարցազրույցը վարեց՝ Մելինէ Անուրան

շնչերենով խօսողների թիւը նուազում է, այնուամենայնիւ Խոսքիում ծնուած ու մեծացած համշնչիները կարողանում են համշնչերէն խօսել եւ հասկանալ:

Խոսքիի համշնչիների մի մասը 1778-1779 թթ. ռուս-թրքական պատերազմի ժամանակաշրջանում արտագաղթել է Դիւզքէի եւ Ադաբազարի կողմերը, իսկ Կրաստան-Թուրքիա սահմանի Պաթումի կողմերում մնացած մի մասն էլ 1944 թ. աքսորուել է Ղազախստան եւ Ուզբեկստան: Այս խմբի մի հատուածը ԽՍՀՄ-ի փլուզումից յետոյ գաղթել է Ռուսաստանի Կրասնոտարից մինչեւ Մոսկուա ձգուող որոշ շրջաններ:

Արեւմտեան Համշնչիներ. սրանք համշնչիների մայր հայրենիքը եղող Ռիզէի Հենչին, Չամլըհենչին գաւառներում եւ Իքիզդերէ, Չայելի, Փազար, Արդիշէն, Ֆընդըքը գաւառների ներքին լեռնային հատուածներում ապրող համշնչիներն են: Ըստ պատմական տեղեկութիւնների եւ աւանդութեան՝ այս համշնչիները Օսմանեան պետութեան կողմից Տրապիզոնի նուաճումից յետոյ համեմատաբար վաղ շրջանում իսլամացած եւ այդ պատճառով էլ իրենց հայրենի հողում մնացած մարդիկ են: Արեւմտեան համշնչիները Համշնչերէն չգիտեն. նրանք խօսում են միայն իրենց յատուկ առօրեայ լեզուով թրքերէնով, որում ապրել են նաեւ համշնչերէն/հայերէն բառեր, որոնց պատկառելի մասը տեղանուններ են:

Թրքաբնակ բոլոր համշնչիները մահմետական են եւ սուննի ուղղութեան հետեւորդ:

Հիւսիսային Համշնչիներ. սոյն խումբը կազմում են այն համշնչիները, ովքեր օսմանցիների կողմից 1461 թ. Տրապիզոնի գրաւումից յետոյ այս շրջանում ենթարկաբար գործադրուած կրօնափոխութեան ճնշումների հետեւանքով, առանց դաւանափոխ լինելու, գաղթել են Տրապիզոն-Օրդու-Սամսոն շրջաններ, իսկ ավելի ուշ էլ՝ 1850 թ. սկսած եւ 1915 թ. տեղահանութեան/ցեղասպանութեան ժամանակ հարկադրուած են եղել գաղթել Արխազիա եւ Ռուսաստանի Սոչի քաղաքը: Որքանով որ տեղեակ են իմ ընթերցած աղբիւրների եւ վերջին տարիներին ունեցածս շփումների շնորհիւ, այս խումբը քրիստոնէայ է, խօսում է համշնչերէն եւ իրեն համարում հայ ազգի մի մասնիկը: Թէեւ սկզբում այս խմբի մեծ մասն Արխազիայում է բնակուել, սակայն վերջին տարիներին արխազաբնակ համշնչիների թիւը լրջօրէն նուազել է եւ առաւելապէս ցրուել Ռուսաստանի Կրասնոտարի երկրամասի որոշ քաղաքներում:

**ԶԵՄԻ ԱՔՍՈՒ-** Արեւելասեւծովեան շրջանի տեղացի ժողովուրդներից եղող համշնչիները ներկայացնում են մի ինքնութիւն, որն ունի թէ՛ տարածքային եւ թէ՛ էթնիկ առանձնայատկութիւններ: Արեւելասեւծովեան շրջանի Տրապիզոն, Ռիզէ եւ Արդվին նահանգների բազմաթիւ գաւառներում, նաեւ այնպիսի նահանգներում, ինչպիսիք են Էրզրումը, Իզմիթը եւ Դիւզքէն, առկայ են իրենց համշնչի անուանողների բնակավայրեր: Օսմանեան կայսրութեան ժամանակաշրջանում արուած արձանագրութիւններում ներկայիս Հենչինից, Չամլըհենչինից եւ Քաջարլարից անդին գտնուող Իսպիր եւ Եուսուֆէիին ենթակայ որոշ բնակավայրեր նշուած են որպէս Համշնչի շրջան: Բացի այդ՝ Ռուսաս-

տանի Սոչի, Կրասնոտար քաղաքներում, Ղազախստանում, Ուզբեկստանում եւ Կիրգիզիայում Խորիդային Միութեան ժամանակաշրջանում տուեալ վայրեր աքսորուածների եւ իրենց համշնչի անուանողների բնակավայրեր կան: Ռուսաստանի Մոսկուա քաղաքում եւս բնակուում են համշնչիներ. Մոսկուայում գոյութիւն ունի «Համշնչիներ» անունը կրող մի հասարակական կազմակերպութիւն: Ընդհանուր առմամբ, թէեւ յիշեալ բնակավայրերի վերաբերեալ առկայ են զանազան տեղեկութիւններ եւ փաստաթղթեր, որոշ տպագիր աղբիւրներում (գիրք, ամսագիր եւայլն) ու համացանցում, սակայն, գոյութիւն չունեն համշնչիների եւ Համշնչի շրջանից արտագաղթի գործընթացների պատճառների, տարբերութի եւ հետեւանքների մասին համապարփակ գիտական ուսումնասիրութիւններ: Համշնչիներից քրիստոնէայ են միայն Ռուսաստանի Կրասնոտար, Սոչի եւ Մոսկուա քաղաքներում ապրողները:

Ըստ իս՝ համշնչականութիւնը խառնածին ինքնութիւն է: Սոյն ինքնութիւնը որքանով որ ընդգրկուել է մի ժամանակ Ռիզէի Համշնչի շրջանում բնակուած, սակայն ժամանակի ընթացքում կամ կրօնական եւ ինքնութեան փոփոխութիւնների ենթարկուած, կամ էլ իր հայրենի երկրից արտագաղթել հարկադրուած համշնչահայերին, նոյնքան էլ վերաբերում է մի ամբողջ դարաշրջան տեւած գաղթերի միջոցով այս շրջան եկած կամ պետութեան կողմից այս կողմերում բնակեցուած, բայց իրենց ծագման վայրի մշակոյթների հետ միախառնուած, ուրիշ էթնիկ եւ կրօնական ծագում ունեցող, բայց այսօր Համշնչն իրենց «հայրենիքը», իրենց էլ՝ համշնչի համարող անձանց: Հէնց այս տեսանկիւնից էլ բարդ է համշնչու ինքնութեան սահմանումը: Օրինակ՝ այն դէպքում, երբ խոսացի համշնչիները եւ նրանց ազգականները՝ Սթալինի ժամանակաշրջանում Պաթումից աքսորուած համշնչիները խօսում են համշնչերէն, ավելի ճիշդ՝ արեւմտահայերէն, ապա Չամլըհենչինում, Հենչինում եւ Թուրքիայի միւս նահանգներում ապրողները եւ իրենց համշնչի անուանողներն այդ լեզուով չեն հաղորդակցուում եւ անգամ ասում են, որ բոլորովին չեն լսել դրա մասին, չգիտեն այն: Այնինչ լեզուն վերին աստիճանի կարեւոր գործօն է՝ որեւէ էթնիկ ինքնութեան սահմանման առումով:

Համշնչական ինքնութեան բնորոշման ժամանակ հանդիպող այլ դժուարութիւններ էլ կան: Մի ժամանակ՝ ոչ շատ հեռաւոր անցեալում՝ մինչեւ 20-րդ դարի սկիզբ, Օսմանեան պետութեան Տրապիզոնի նահանգի Հենչին գաւառում ապրած հայերի՝ այլ վայրերի հայերի հետ յարաբերութիւնները եւս հանելուկային են: Համշնչահայերի կրօնափոխութեան գործընթացին վերաբերող փաստաթղթերը (մինչեւ 19-րդ դարի վերջերը), ցոյց են տալիս, որ դաւանափոխութիւնը գրեթէ աւարտուել է, իսկ հաւատաւորիս լինել չցանկացողներն էլ գաղթել են այնպիսի շրջաններ, ինչպիսիք են Սթամպուլը եւ Տանիքը: Սակայն որեւէ ապացոյց չկայ, որ այդ կրօնափոխութիւնը եղել է Օսմանեան պետութեան քաղաքականութիւնը:

Շարունակութիւնը՝ 6-7-րդ էջերում:

# Имя Нунэ Агаджановой в Краснодаре так и не увековечили



Фильм Сергея Эйзенштейна "Броненосец "Потемкин" был снят в 1925 г. Эта немая художественная лента была основана на реальных событиях, произошедших в июне 1905 года, когда на броненосце "Потемкин" команда подняла восстание и захватила корабль.

Фильм стал открытием для современников и по замыслу, и по техническому воплощению и сделал имя новой советской режиссуры во всем мире. "Броненосец "Потемкин" оказал огромное влияние на развитие всего кинематографа. В своих работах картину цитировали Терри Гиллиам, Фрэнсис Форд Коппола, Вуди Аллен и другие. Но немногие знают, что автором сценария к этому фильму была екатеринодарская (ныне Краснодар) армянка Нунэ Агаджанова. Предлагаем вниманию читателей материал о Нунэ Агаджановой, опубликованный в ноябре 2009 года в газете "Краснодарские известия" и приуроченный к 120-летию со дня рождения нашей соотечественницы.

**В** ноябре исполнилось 120 лет со дня рождения Нины Агаджановой - члена Союза кинематографистов СССР, обладательницы орденов "Знак Почета" и Трудового Красного Знамени. Она родилась в Екатеринодаре. Ее поступки изменили сразу две истории: России и кинематографа. Эта хрупкая голубоглазая рыжеволосая молодая женщина была пламенной революционеркой и соратницей Владимира Ленина, написавшей сценарий "Броненосца "Потемкин", - первого, по версии Американской киноакадемии и опросу кинокритиков, среди ста лучших фильмов в истории кино.

## Гимназистка, подпольщица, тапер

Все мы родом из детства. Подтвердить или опровергнуть эту старую истину в случае с Ниной Фердинандовной невозможно: даже в собственной автобиографии, хранящейся в архиве Российской государственной библиотеки, она ничего не пишет о родителях. О семье Нунэ (так по-армянски звучит "Нина") известны крохи: ее



отец-армянин бежал на Кубань из Турции во время гонений 1877-1878 годов. Нину и ее сестру Елену с рождения воспитывал дядя-купец, чья лавка располагалась в глубине двора дома купцов Тарасовых на перекрестке современных улиц Красноармейской и Горького.

- Нина росла серьезной девочкой, много читала и близко к сердцу приняла идеи Маркса: ей хотелось побороть несправедливость мироустройства, - говорит киновед, член Союза кинематографистов России, профессор кафедры телевидения и радиовещания КГУКИ Григорий Гиберт. - И вот представьте: в 1906 году семнадцатилетняя воспитанница 1-й Екатеринодарской женской гимназии Агаджанова сама выходит на местную ячейку большевиков и начинает участвовать в

ма. Я слушала, многие играли хорошо, но их музицирование и фильм не составляли полного единства. А я внимательно глядела на экран, следила за развитием действия, старалась предугадать, что будет дальше, кое-что сочиняла на ходу, импровизировала. Я была принята." Все лето, до отъезда в Москву, Агаджанова проработала у Боммеров (ныне на месте их кинотеатра - библиотека им. братьев Игнатовых). Таким было первое знакомство с кинематографом будущей сценаристки "Броненосца "Потемкин".

## "Хитрая" подруга Малевича

С тех пор Нунэ не бывала в Екатеринодаре. В Москве она поступит на педагогические курсы историко-фило-



революционной борьбе - ведет пропаганду среди рабочих мукомольной фабрики Ерошова и кирпичного завода. Когда об этом узнают родители ее однокашников, они требуют исключить Нину из гимназии, что и происходит. Нунэ уезжает к дальним родственникам в Воронеж, где продолжает подпольную работу.

В Екатеринодар Нина вернется в мае 1909-го без средств к существованию. Она вспоминала: "В таком городе, как наш, мне нелегко было найти работу. Однажды прибегает один из друзей: "Нунэ, владельцам кинематографа братьям Боммер срочно требуется аккомпаниатор, а ты здорово играешь". Прослушивание проходило прямо во время демонстрации филь-

логического факультета и с головой окунется в нелегальную партийную работу в столице, Орле, Иваново-Вознесенске. В 1914-м, уже попавшая в поле зрения охраны, Агаджанова под чужой фамилией переедет в Петербург, станет ответственным секретарем большевистского журнала "Работница" и членом Выборгского комитета партии. Местные филеры дадут ей кличку наблюдения "Хитрая", тогда как их московские коллеги звали быстрою и подвижную Нину "Бабочка". Сохранилось донесение о слежке за Нунэ от 10 января 1916 года: "Бабочка проживает в доме 11 по проезду Яузского бульвара. В 12 часов дня вышла из дома, тут же против своего дома на ходу села в трамвай и уехала

без наблюдения, более не видели".


За партийную работу Нина Фердинандовна пять раз отбывала тюремное заключение, дважды была сослана за организацию забастовок. В ссылке "Хитрая" познакомится с сестрой Ленина Марией Ильиничной и своей судьбой - революционером (соратником Молотова, Сталина, Куйбышева, Калинина по подполью) и будущим мужем Кириллом Шутко, которого безоглядно полюбит. Выросший в Ейске сын мелко торговца, в 1901-м Кирилл после реального училища поступит на химическое отделение Московского императорского технического училища (теперь МВТУ им. Баумана) с годовой стипендией для талантов в 375 рублей. Увлечется идеей всеобщего равенства, уйдет в подполье, познакомится в знаменитой "Ляпинке"- общежитии для бедных студентов - с художником Казимиром Малевичем и бок о бок с ним будет участвовать в уличных боях Революции 1905-го. Когда в 1907-м Нина только вступит в РСДРП, Кирилл Шутко и Казимир Малевич будут ставить в Ейском драмтеатре "Ревизора" Гоголя: Казимир придумает декорации и костюмы, Кирилл выступит режиссером и сыграет Хлестакова...

Февральскую революцию 1917-го Нина Агаджанова встретит, устраивая женские демонстрации и захватывая тюрьму "Кресты". Она будет стоять на Финляндском вокзале, встречая Владимира Ленина, чьи поручения не раз выполняла, и вместе с делегатами Выборгского райкома партии вручит ему партбилет. Вернется к работе по подготовке Выборга к Октябрю и после победы будет назначена управляющей делами Наркомата труда. В Гражданскую войну окажется на подпольной работе в родных краях, ставших белогвардейским тылом: в Новороссийске и Ростове-на-Дону. В 1920-1922-м вместе с Кириллом Ивановичем будет вести дела партии в Минске, работать в посольстве в Праге. В Москву супруги вернутся только в 1922-м: Шутко получит должность заведующего делами кинематографа в ЦК ВКП(б) и прозвище "Комиссар по делам кино". Их квартира в доме на Страстном бульваре с обширной библиотекой и непоседливым терьером Бюти каждый вечер будет наполняться голосами Казимира Малевича, с которым Нина Фердинандовна была дружна не меньше мужа, кинорежиссеров Сергея Эйзенштейна, Григория Александрова и Дзиги Вертова, актрисы Любови Орловой и других звезд кино.

## В споре с Эйзенштейном

- истина

Знавшие "старую большевичку Агаджанову"(когда писался сценарий "Потемкина", ей было всего 36 лет) не раз убеждались, что из-под пера Нины Фердинандовны выходят замечательные стихи и рассказы. Кто посоветовал ей начать писать для кино? Тайна. Но с 1924 года она работает сценаристом-консультантом, редакто-



ром и заведующей сценарным отделом киностудии "Межрабпомфильм". В 1924-м она создает свой первый киносценарий "В тылу у белых". Год спустя, к 20-летию революции 1905 года, у Нунэ готов еще один - "1905 год", охватывающий не только восстание на броненосце "Потемкин", но и другие события тех дней. На его утверждение в ЦИК ВКП(б) Агаджанова настаивает: режиссером фильма должен быть Сергей Эйзенштейн. Вместе они садятся за работу - и эпизод с броненосцем становится главным в сценарии.

Второй режиссер этой картины Григорий Александров в книге "Как создавался "Броненосец "Потемкин" пишет: "Талантливая, восприимчивая, сердечная Нунэ с первых же слов почувствовала замысел Эйзенштейна. Нам сказочно повезло со сценаристом! Во-первых, Нина Фердинандовна о революции знала не понаслышке. Во-вторых, литературный дар Агаджановой был настолько высок, что две странички написанного ею грандиозного сценария оказалось возможным развернуть в целый фильм... Картина была связана с подлинными фактами революции, и комиссия ЦИК СССР организовала несколько встреч со свидетелями событий 1905-го: Мазуренко-бывшим председателем Всероссийского крестьянского Союза, Фельдманом - участником восстания на "Потемкине", Литвин-Седым - руководителем боев на Пресне и другими. Агаджанова, Эйзенштейн и я делали свои записи".

Как же создавалась киноистория "Броненосца "Потемкин"? Весной 1925-го Кирилл Шутко снял второй этаж дачи на опушке леса в подмосковной Немчиновке, по соседству с дачей Малевича. Первый этаж дома занимал Исаак Бабель. Каждое утро Эйзенштейн приезжал в Немчиновку и поднимался на верхнюю веранду, где шла работа над сценарием "1905 год": сначала свой конспект читала вслух Нина Фердинандовна, Эйзенштейн дополнял и иногда начинал диктовать сам. Они спорили, снова писали. После обеда Сергей Михайлович спускался вниз и вместе с Бабелем работал над другим сценарием, по его "Одесским рассказам" Вечерами же за столом или прямо на лужайке режиссер и сценаристка в компании

Малевича, Бабеля и Шутко устраивали посиделки с "зубровкой"...

Уже в начале июля сценарий был готов. Снимать планировали в Москве, Ленинграде, Одессе, Севастополе, Краснодаре, Тифлисе, Баку, Батуме и Златоусте. Но из-за накладок география киноэкспедиции сужается до черноморского побе-



режью Украины и павильонов "Мосфильма". В сценарий тоже вносятся коррективы. Эйзенштейн и Александров "с покаянными головами" идут сообщать о них Агаджановой: "Мы прихватили с собой символически мирных голубя и пальмовую ветвь, чем ужасно рассмешили Нину Фердинандовну. Голубь, усевшийся на книжном шкафу, над головой Сергея Михайловича, вел себя непочтительно и сверху "украсил" его буйную шевелюру. Кончилось смешом".

Однако после премьеры "Броненосца "Потемкин" в январе 1926 года в Москве в 1-м Госкинотеатре (ныне "Художественный", который тогда был превращен в настоящий корабль с одетым в матросскую

форму персоналом) и на Украине Эйзенштейну и Агаджановой было не до смеха. Один из партийных работников заявил, что сценаристы украли его текст. Естественно, доказать справедливость своих притязаний любитель чужих авторских не смог.

### Нунэ, ученики, самовар...

Успех "Потемкина", собравшего множество наград, был громким. И Нина Фердинандовна продолжила писать для киностудии "Межрабпомфильм", где служила заместителем заведующего литературно-сценарным отделом и режиссером-постановщиком. Но в конце 1930-х годов партия перебрасывает Агаджанову на дипломатическую работу в посольство в Риге. В кинематограф она вернется только в 1939-м - в качестве заместителя начальника сценарного отдела и старшего редактора киностудии "Союздетфильм". Хотя ее брак с Кириллом Ивановичем Шутко даст трещину (вскоре у бывшего супруга появится другая семья), в ее доме по-прежнему будет множество гостей из мира кино - режиссеров, операторов, сценаристов, актеров: "Нунэ около своего маленького самовара умела наставлять на путь творческого покоя бесчисленное множество ущемленных самолюбий. Делалось это так же бескорыстно и заботливо, как поступают дети, собирая в спичечные и папиросные коробки - или искусственные гнездышки из лоскутов и ваты - кузнечиков с оторванной лапкой, птенчиков, выпавших из гнезд, или взрослых птиц с перебитыми крыльями. Сколько таких же подбитых и ушибленных бунтарей встречал я здесь вокруг ее уютного чайного стола", - вспоминал Эйзенштейн.

После Великой Отечественной войны, с 1945-го по 1952-й, доцент Агаджанова преподавала на факультете сценарного мастерства ВГИКа. Опытный и тонкий педагог, она определила судьбы многих ныне известных деятелей кино. Даже когда Нина Фердинандовна ушла на пенсию, ее квартира на Ленинградском проспекте продолжала оставаться центром притяжения для ее учеников. Она ушла из жизни в 1974 году, оставив воспоминания о своей революционной деятельности и зарождении советского кинопроизводства, рассказы "Остановка трамвая", "Хирурги" и "1941 год", десяток стихотворений. И сценарии для так и неснятых фильмов: об истории России и дома Романовых, "Виктуар", "Подруги", "Пионер за границей", "Крестовый поход", "Улица радости" и др.

- В мемуарах и воспоминаниях современников мне не встречались упоминания о том, что у Нины Фердинандовны в браке с Кириллом Шутко были наследники, - продолжает Григорий Гиберт. - Зато сейчас в отечественном кино трудится режиссер Нонна Агаджанова: возможно, внучка, а может, лишь однофамилица Нунэ, имя которой в Краснодаре так и не увековечили.

Анастасия Куропатченко

### Амшенский рецепт от профессионала

Кнаррик Атамовна Кочикян - профессиональный ресторатор, получившая профильное образование в одном из лучших советских учебных заведений - московском институте Народного хозяйства им. Плеханова. Созданный ее семьей сочинский ресторан "Урарту", ставший одним из культурно-познавательных армянских центров региона, пользуется большой популярностью среди жителей и гостей города-курорта.

Армянская кухня... Насладившись однажды, влюбишься навсегда. Описанная многими отечественными и иностранными летописцами, она и по сей день продолжает будоражить умы привередливых гурманов. Традиции питания, заложенные с древних времен, донесли до нашего времени секреты армянской кухни. Но самым главным ее таинством является трепетное отношение народа к традициям предков, помноженное на армянское трудолюбие и тягу к знаниям.

Одним из подвидов национальной системы питания является Амшенская кухня, сформировавшаяся под влиянием особенных природных и социально-культурных традиций. Ее "визитными карточками" по праву считаются - хашлама, пача, сохи тава, хаш, долма, танов абур с пшеницей, дирма, бонджаров абур, ехинджев абур, татарлома, гавурма, лоби, лазды хац, ека, ката, ха-виц, турша, мадзун, чортан и многие другие. Венцом же армянского застолья всегда был хлеб (hwg). Ведь не случайно, понятие "кушать" отражалось в армянском словосочетании "кушать хлеб" ("hwg nırlı, hwg nırlı").

Сегодня Кнаррик Атамовна делится старинным рецептом приготовления амшенского хлеба Хороч.

Из кукурузной муки, дрожжей, соли и воды замешивают тесто, ставят в теплое место на 40 минут. Для начинки свекольные листья припускают. Лук порей, зеленый лук слегка пассируют на растительном масле, добавляют сваренные свекольные листья, подсаливают.

Подошедшее тесто выкладывают на влажные каштановые листья, кладут на деревянную лопату. В тесте делают выемку, в которую кладут начинку, защипывают, верх ровняют, придают круглую форму.

Выпекают этот старинный вид домашнего хлеба в пуре (Пур - это печь, выложенная из камня, сверху покрыта глиной. В нем пекут хлеб, гату, запекают мясо, птицу и т.д.).

**Ингредиенты:**

**Для теста:**

Мука кукурузная тонкого помола 500 гр.

Дрожжи 10 гр.

Вода 250 гр.

Соль 25 гр.

**Для начинки:**

Свекольные листья 500 гр.

Лук- порей 300 гр.

Зеленый лук 300 гр.

Уважаемые читатели газеты "Дзайн амшенакан", обсудить с Кнаррик Атамовной амшенские рецепты, предложить свои варианты вы можете по адресу: urartusochi@inbox.ru

Սկիզբը՝ 3-րդ էջում:

Քանի որ Համշենի երկու կողմերում գտնուող եւ նշանաւոր հոգեւոր կեդրոնները հոգաւորութիւնն ու Տրապիզոնում ապրող հայերը եւ նրանց եկեղեցիները գործում էին մինչեւ 1915 թ. Տեղասպանութիւնը, ապա տրամաբանական է թուում այդ ընթացքում Համշենում եղած հայերի դասնափոխութիւնը տեղացի աստատելիների եւ տնտեսական ճնշումներով պատճառաբանել:

Միւս կողմից՝ դեռեւս անյայտ է նաեւ, թէ Հայոց մայր հայրենիքի եւ հայ գանգուածի հետ ինչ յարաբերութիւններ են ունեցել համշենահայերը՝ Համշենում բնակութիւն հաստատելուց հետեւած եւ դարեր տեւած գործընթացում: Գաղտնիք են մնացել նաեւ դարեր շարունակ համշենաբնակ հայերի հոգեւոր կեդրոններ հանդիսացած եկեղեցիների պատմութիւնը եւ այդ եկեղեցիներում պահուող մատենաները:

Ուստի այսօր անհնար է դիւրին կերպով որոշել, թէ իրեն համշենցի համարող մէկը հայկական ծագում ունի, թէ՞ մէկն է նրանցից, ում պապը մի ժամանակ ապրել է Համշենի գաւառում եւ այստեղից գաղթել այլ վայրեր: Նման համշենցիների մէջ միակ բացառութիւնը կազմում են արեւմտահայերէնի բարբառներից մէկը համարուող համշենահայերէնով խօսող համշենցիները: Որեւէ լեզու, այն էլ՝ ճնշումների, Տեղասպանութեան ենթարկուած մի ժողովուրդի լեզուն անհնար է սովորել հայերի հետ դրացիական յարաբերութիւնների արդիւնքում, ինչպէս դա փորձում են պնդել թուրք ազգայնականները: Եւ եթէ անգամ սովորեն էլ, միեւնոյն է՝ այն չի կարող վերածուի մայրենի լեզուի, յամենայնդէպ՝ այդչափ կարճ մի ժամանակահատուածում: Հետեւաբար համշենահայերէնի առկայութիւնը եւ այն փաստը, որ այդ լեզուն դեռ կիրառւում է, համշենցիների հայկական ծագումը ցոյց տուող ամենակարգապէս ապացոյցն է: Եւ, ըստ իս, համշենահայերէնով հաղորդակցուող համշենցիներն այն համշենահայերն են, ովքեր դեռեւս լաւ պատկերացում չունեն, թէ պատմութեան ընթացքում ինչեր են եկել իրենց գլխին:

**ԱՍԼԱՆ ԶԱՆՁԸ**- Համշենցիները մի էթնիկ հանրութիւն են կազմում եւ բնակւում են Արդվիկի նահանգի խոպա եւ Բորչկա գաւառներում, Ոհգէ նահանգի Չամըլհեմշին, Փագար, Յընդըքը եւ Չալեի գաւառներում, ինչպէս նաեւ՝ Ադաբազարում: Բացի այդ՝ մահմետական եւ քրիստոնէայ համշենցիներ կան նաեւ Ռուսաստանի Կրասնոտար, Սոչի քաղաքներում եւ Աբխազիայում: Թրքաբնակ համշենցիները, բացառութեամբ խոպայում, Բորչկայում եւ Ադաբազարում բնակւողների, չեն խօսում հայերէնի բարբառներից մէկը հանդիսացող համշենահայերէնով:

**ՄԵԼԻՆԷ ԱՆՈՒՄԵԱՆ**- Թուրքիայում ապրող համշենցիները, որպէս էթնիկ խումբ, ի՞նչ խնդիրների են հանդիպում: Ըստ ձեզ՝ ինչպէ՞ս է հնարավոր լուծել այդ խնդիրները:

**ՀԻՔՄԵԹ ԱՔՉԻՉԵՔ**- Թուրքիայում գուտ համշենցի լինելու պատճառով մասնաւոր խնդիրն առաւել կարելի է արծանագրել շատ աւելի ընդգրկուն, ժողովրդավարութեան պակասով պայմանաւորուած խնդիրներ, երբ բոլոր ոչ թուրք լեզուների եւ մշակոյթների նկատմամբ գործադրում է ուժացման, օտարացման, արհամարհանքի, ստորացման քաղաքականութիւն, եւ երբ, յատկապէս, ոչ մուսուլման հատուածները գուրկ են որոշ հնարաւորութիւններից եւ իրաւունքներից:

Համշենցիների առումով հիմնական խնդիրը համշենցիներին հետզհետէ վերացումն է: Իսկ որեւէ լեզուի անհետացում պայմանաւորուած է ոչ միայն կիրառող ասիմիլացիոն-ազգայնամուլ քաղաքա-



ԱՍԼԱՆ ԶԱՆՁԸ

կանութեամբ, այլ նաեւ՝ կապիտալիզմի զարգացման պատճառով ի յայտ եկող ուրպանիացիայով եւ կլոպալիզացիայով: Մարդկանց մեծ մասի մօտ գոյութիւն չունի լեզուի, ինքնութեան, մշակոյթի պահպանման գիտակցութիւն:

Սոյն խնդիրների մի մասը կարելի է լուծել տուժած ժողովուրդների պահանջների եւ պայքարի միջոցով Թուրքիան զարգացած ժողովրդավար երկիր վերածելու շնորհիւ: Թէեւ շատ սահմանափակ, այնուամենայնիւ, այդ ուղղութեամբ արդէն իսկ առկա են որոշ փոփոխութիւններ ու քայլեր (այնպիսի օրինակ կարգաւորումներ, ինչպիսիք են թուրքերէնի հետ մէկտեղ որոշ լեզուների՝ դարձումներում որպէս ընտրովի դաս ընդգրկելը, այդ լեզուներով հրատարակումներ եւ քաղաքական քարոզչութիւն տանելու հնարաւորութիւնը եւ այլն), սակայն դեռ երկար ճանապարհ ունենք զնալու այդ ուղղութեամբ: Իսկ դա հնարաւոր է: Եւ... Յոյս, մտադրութիւն, կամք եւ հաւանականութիւն...

**ԶԵՄԻԼ ԱՔՍՈՒ**- Թուրքիայում բոլոր էթնիկ խմբերի հիմնական խնդիրը սեփական ինքնութեան, լեզուի եւ մշակոյթի պահպանումն է: Թուրքիայի Հանրապետութեան բոլոր հիմնադիրները Օսմանեան պետութեան պաշտօնեաներն էին, ովքեր գաղափարապէս կրօնել էին Միութիւն եւ առաջադիմութիւն կուսակցութեան շրջանակներում: Սոյն կարգերի հիմնական հաւատաւորները բոլորին թուրք եւ սուննի մահմետական դարձնելն էր: Այդպիսով նրանք նպատակ ունէին ազգային միասնութիւն ապահովել: Այդ պատճառով էլ թուրք եւ մուսուլման չեղող բոլոր էթնիկ ու կրօնական խմբերը պետութեան թեթեւ ձեռքով ենթարկուեցին ուժացման: Այդ ուժացումը որքան էլ թէ՛ ներքին դիմադրութեան եւ թէ՛ փոփոխուող միջազգային իրադրութեան պայմաններից ելնելով՝ ընկրկած լինի, այնուհանդերձ շարունակում է լինել թուրքական պետութեան պաշտօնական քաղաքականութիւնը:

Համշենցիների պարագայում կարելի է խօսել վերացման գործընթացից: Թէ՛ պետութեան ասիմիլացիոն քաղաքականութեան եւ թէ՛ տնտեսական ու սոցիալական պայմանների հետեւանքով համշենահայերէնն ու համշենական մշակոյթը մեծաւ մասամբ վերացուած են: Համշենահայերէնի բառապաշարը վերին աստիճանի աղքատացել է: Սերունդների մէջ մի մեծ վիճ է առաջացել: Համշենահայերէնը 1990-ականների կէսերից սկսած երաժշտութեան մէջ (Քազըմ Քոյունջու եւ այլ երգիչներ) եւ կինեմատոգրաֆիայում (Օզջան Ալպերի «Մոմի» եւ «Աշուն» ֆիլմերը) կիրառուելու շնորհիւ զարթօնք է ապրել՝ վրայի մահուան հողը թօթափելով: Սակայն դեռ մահուան մահճում է:

Թրքական կառավարութիւնը 2013 թ. կանաչ լոյս է վառել, որպէսզի բազմաթիւ լեզուներ, որպէս ընտրովի դաս, ուսուցանուեն դպրոցներում: Սակայն համշենահայերէնը չի ընդգրկուել այդ լեզուների շարքում: Միւս կողմից էլ՝ խնդ-

## Համշենն ու համշենահայերը. Ներկայացնում են համշենցի մտաւորականները

րահարոյց է նաեւ համշենահայերէնի հայերէնից առանձին լեզու ընդունելն ու սովորեցնելը: Համշենցիները հայերէնի ճիւղերից մէկն է: Սակայն հնարաւոր չէ այդ լեզուն հայկական դպրոցներում ուսուցանել, համշենցիներն էլ, քանի որ մահմետական լինելու պատճառով պետութեան կողմից թուրք են համարում, չեն կարող յաճախել հայկական դպրոցներ: Ո՞վ գիտէ, միգրացիոն քանի որ պետութիւնը համշենցիներին հայ է համարում, Համշենցիներն էլ՝ հայերէն, ապա չի կարծում, թէ մեր լեզուն պետք է առանձին ուսուցանուի:

Սակայն այս հարցում մէկ այլ խնդիր էլ կայ. համշենահայերէնին նուիրուած լեզուաբանական աշխատութիւններ առանձնապէս յայտնի չեն: Ես տեղեակ եմ, որ Հայաստանի որոշ լեզուաբաններ կարելուք ուսումնասիրութիւններ են արել այս բնագաւառում, բայց մենք՝ Համշենցիներս, չենք կարողանում հայերէն տառերը կարդալ ու գրել: Հետեւաբար անհրաժեշտ է բազմակողմանի թարգմանութեան եւ ուսուցման գործընթաց: Համշենցի մտաւորականները պէտք է հայերէն սովորեն, հայերէնով թեքստերը թուրքերէն եւ համշենցի թարգմանեն: Բացի այդ՝ հարկաւոր է այնպիսի ինստիտուտներ հիմնել, որոնք Համշենցիների ուսուցման աշխատանքներ կը տանեն:

**ԱՍԼԱՆ ԶԱՆՁԸ**- Թրքաբնակ Համշենցիների՝ Համշենահայերէն խօսել կարողացողների վերաբերեալ կարող եմ ասել հետեւեալը. համշենցիների նոր սերունդները հետզհետէ աւելի քիչ են հարողակցում այս լեզուով: Թուրքերէն բառեր աւելի յաճախ են սպորում համշենահայերէնի մէջ, թէեւ դրանց Համշենցիներն տարբերակները գոյութիւն ունեն: Եթէ որեւէ միջոց չձեռնարկուի, համշենահայերէնը հետզհետէ կը թուլանայ եւ, ի վերջոյ, գուցէ վերանայ: Սոյն վտանգը շատ մեծ է, քանի որ համշենցիները գրաւոր լեզու չէ:

**ՄԵԼԻՆԷ ԱՆՈՒՄԵԱՆ**- Շփումներ ունեցե՞լ էք Ռուսաստանի եւ Աբխազիայի համշենցիների հետ:

**ՀԻՔՄԵԹ ԱՔՉԻՉԵՔ**- Համացանցով նամակագրական կապ ենք ունեցել Ռուսաստանում եւ Աբխազիայում ապրող համշենցիների հետ, իսկ 2012 թ. ռուսաստանաբնակ համշենցիների հրաւերով «Վոլա» երաժշտական խմբի հետ հնարաւորութիւն ունեցայ երկու համերգ տալ Մոսկուայում եւ Սոչիում: Այս համերգների կապակցութեամբ «Հատիկ» միութիւնից մի քանի ընկերներով Մոսկուա եւ Սոչի մեկնելով՝ առիթ ունեցանք ծանօթանալու այնտեղի մեր համշենցի եղբայրների հետ: Մեր առաջին դէմ առ դէմ երկխօսութիւնը եղաւ հէնց այդ համերգների առթիւ մեր ունեցած շփման շնորհիւ:

**ԶԵՄԻԼ ԱՔՍՈՒ**- Այնտեղի համշենցիների հետ ուղղակի շփումներ չեն ունեցել: Այնտեղի համշենցիների մասին տեղեկացուած եմ՝ «Հատիկ»ի եւ Համշենի մշակոյթի ու պատմութեան վերաբերեալ ուսումնասիրութիւններ անող ընկերներին շնորհիւ:

**ԱՍԼԱՆ ԶԱՆՁԸ**- Ես ժամանակ առ ժամանակ շփումներ ունենում եմ ռուսաստանաբնակ համշենցիների հետ:

**ՄԵԼԻՆԷ ԱՆՈՒՄԵԱՆ**- 2011 թ. Հոկտեմբեր ամսին Սթանպոլում հիմնուեց «Հատիկ» (Համշենական մշակոյթի ուսումնասիրման եւ պահպանման կազմակերպութիւն) միութիւնը: Դուք անդամագրուա՞ծ էք այդ միութեանը: Ինչպիսի՞ գործունէութիւն է ծաւալում եւ ի՞նչ տեսակի աշխատանքներ է կատարում սոյն կազմակերպութիւնը: Ձեր կարծիքով այս միութիւնն ուրիշ ինչպիսի՞ միջոցառումներ կարող է իրականացնել՝

համշենական մշակոյթը պահպանելու նպատակով:

**ՀԻՔՄԵԹ ԱՔՉԻՉԵՔ**- «Հատիկ» միութիւնը հիմնուել է 2011 թ. Յունիսին, իսկ 2011 թ. Հոկտեմբերին, իր կեդրոնը բացելով, սկսել փաստացի գործունէութիւնը: Ես միութեան 7 հիմնադիր անդամներից մէկն եմ եւ ստեղծումից ի վեր կատարում եմ զլխաւոր քարտուղարի պարտականութիւնները: «Հատիկ»ը հիմնուել է համշենական լեզուի, մշակոյթի, պատմութեան ոլորտներում գիտական, մշակութային, արուեստի աշխատանքներ կատարելու եւ անդամների միջեւ սոցիալական համերաշխութիւն ամրապնդելու նպատակով: Դեռեւս չենք կարող ասել, թէ ազդեցիկ, յազեցած գործունէութիւն է ծաւալել, սակայն «Հատիկ»ի հիմնումը, որպէս առաջնաին քայլ, ինքնին կարելուք է: «Հատիկ»ի հիմնումով առաջին անգամ Թուրքիայում յատկապէս համշենցիներն խօսող համշենցիները միաւորուեցին մէկ կառույցի մէջ եւ համշենականութեան միջոցով դարձան մի գործունէութեան առարկայ: Մեր միութիւնում մինչ այժմ իրականացուել են տարբեր միջոցառումներ. ներկայացուել է մեր երաժշտութիւնն ու պարերը, մատուցուել են մեր անհնչական ուսուցաներ, կազմակերպուել են համերգներ, ճաշկերոյթներ, նուագել են մեր գործիքներով՝ պարկապզուկով, կինեմատոգրաֆիայի ուղղութեամբ մեր գիտելիքները հարստացնելու նպատակով սեմինարներ կազմակերպուել, գեկուցումներ՝ լեզուի եւ մշակոյթի թեմայով, հանդիպումներ՝ եայլաներում, զբօսանաւով զբօսանքներ, բացի այդ՝ որոշ ուսանողների կրթաթոշակի հնարաւորութիւն ենք ստեղծել: Երիտասարդ գիտնականների հետ իրականացում է մի գիտական աշխատանք, որի ուսումնասիրութեան առարկան համշենցի քերականական կառուցուածքն է:

«Հատիկ»ը պետք է հիմք լինի համշենցիներին լեզուով մշակութային, արուեստի, գիտական անխաղճեղի իրականացման, ստեղծագործութիւնների արարման եւայլնի համար, պէտք է այնպիսի ուսումնասիրութիւններ կատարի համշենական մշակոյթի եւ լեզուի ուղղութեամբ, որոնք նախ՝ կ'աւելացնեն համշենցիների հետաքրքրութիւնն այս թեմաների նկատմամբ, պետք է անհրաժեշտ գործունէութիւն ծաւալի, հնարաւորութիւններ ստեղծի՝ որպէսզի համշենցիները չվերանայ, խրախուսի այդ ուղղութեամբ կատարուող աշխատանքները:

**ԶԵՄԻԼ ԱՔՍՈՒ**- Ես մասնակցել եմ «Հատիկ»ի հիմնադրման աշխատանքներին, կազմակերպութեան խորհրդակցական խորհրդի անդամ եմ: Մենք «Հատիկ»ը ստեղծել ենք երկու նպատակով. առաջին՝ ինչպէս վերելու էլ են համառօտ անդրադարձել այդ հարցին, ուսումնասիրութիւններ կատարել համշենական մշակոյթի եւ լեզուի վերաբերեալ, աջակցել այս բնագաւառում աշխատող հետազօտողներին, երկրորդ՝ ապահովել, որ համշենցիները ծանօթանան միմեանց հետ եւ միաւորուեն: Երկրորդ ուղղութեամբ կազմակերպութիւնը որոշ աշխատանքներ կատարել է: Թուրքիայում բնակուող համշենցիների մեծ մասը տեղեկ է միութեան հիմնադրման մասին եւ հետեւում է նրա գործունէութեանը: Սակայն մենք, որպէս կազմակերպութիւն, մեր հիմնական նպատակի ուղղութեամբ դեռեւս աշխատանքներ չենք իրականացրել: Դրա հիմնական պատճառը ցրուածութիւնն ու թեքնիկական դժարութիւններն են: Սակայն ես կարծում եմ, որ կարճ ժամանակամիջոցում աշխատանքներ կանենք նաեւ այս ուղղութեամբ:

# Համշին ու համշինահայերը. ներկայացնում են համշինցի մտաւորականները



ԶԵՄԻ ԱՍՄԻ

**ԱՍԼԱՆ ԶԱՆՁԸ-** Այո՛, ես անդամագրուած եմ «Հատիկ» միութեանը: Սակայն չեմ կարողանում մասնակցել «Հատիկ»-ի՝ Սթամպուլում տեղի ունեցող միջոցառումներին, քանի որ բնակում եմ Խոպայում: Կազմակերպութիւնը երբեմն զանազան հաւաքներ, ուղեւորութիւններ եւ մշակութային միջոցառումներ է իրականացնում անդամ եղող եւ չեղող համշինցիների հետ: Միութեան նպատակը համշինական մշակոյթի, լեզուի պահպանման ուղղութեամբ բազմազան գործունէութիւն ծաւալելն է:

**ՄԵԼԻՆԷ ԱՆՈՒՄԵԱՆ- UNESCO-ի հրապարակած «Վտանգի տակ գտնուող լեզուների ատլասը» ցույց է տալիս, որ 18 լեզու Թուրքիայում վերացման վտանգի տակ է: Համշիներէնը տեղ է գտել «բացայայտ վտանգի տակ եղող» լեզուների դասի տակ: Ըստ ձեզ՝ ուրիշ ի՞նչ միջոցներ կարելի է ձեռնարկել, որ պէտքի համշինահայերէնը չվերանայ, եւ պահպանուի համշինական մշակոյթը:**

**ՀԻՔՄԵԹ ԱՔՉԻՉԵՔ-** Ինչպէս վերելու մշտնջեն, Համշիներէն լեզուով մշակութային եւ գիտական ստեղծագործութիւններ ստեղծելը եւ նախագծեր իրականացնելը հիմնարար անհրաժեշտութիւն է: «Հատիկ»-ն ինքն էլ կարող է Համշիներէնի վերաբերեալ աշխատանքներ կատարել, համշիներէնի ուսուցման համար ծրագրեր իրականացնել, դասընթացներ կազմակերպել: Բացի այդ՝ պէտք է միջին տեւողութեամբ անհրաժեշտ գիտական ներկայացումները ուսումնասիրութիւններ անելով՝ ապահովել, որ համշիներէնը դասաւանդուի դպրոցներում:

Համշիներէնի պահպանման եւ զարգացման առումով մէկ այլ հնարաւորութիւն է նաեւ հայ գիտնականների, մշակոյթի եւ արուեստի գործիչների եւ, անգամ, Հայաստանի հետ երկխօսութեան զարգացումը: Կարող ենք արձանագրել, որ գիտութեան, մշակոյթի եւ արուեստի շրջանակների հետ, թէկուզ եւ սահմանափակ, այնուամենայնիւ, առկայ է երկխօսութիւն, սակայն Հայաստանի պետութեան հետ քաղաքական եւ պատմական պատճառներով մօտ ժամանակներում անհնար է թուում այնպիսի առնչութիւն, որպիսին նկատում ենք Կրաստանի պետութեան եւ թրքաբնակ վրացիների պարագայում:

**ԶԵՄԻ ԱՍՄԻ-** Նախ եւ առաջ պէտք է համշինահայերէնի բառարան կազմել եւ կենդանի Համշիներէնն արձանագրելով՝ փրկել նրան վերացումից: Համշինական լեզուի եւ մշակոյթի վերաբերեալ աշխատանքները գիտական հէնքի վրայ դնելու համար հարկաւոր է մի անկախ կամ համալսարանին կից ինստիտուտ հիմնել: Բացի այդ՝ պէտք է տարբեր վայրերում եւ ժամանակներում հրատարակուած՝ համշինահայերի վերաբերեալ յօդուածները, գրքերը եւ այլ փաստաթղթեր մէկտեղելով՝ դրանք հասանելի դարձնել բոլորին: Համշինական լեզուն ու մշակոյթը պահպանելու եւ զարգացնելու համար անպայման պէտք է խրախուսել համշիներէնով գրականութեան եւ արուեստի գործերի ստեղծումը:

**ԱՍԼԱՆ ԶԱՆՁԸ-** Այո՛, UNESCO-ի հրապարակած «Վտանգի տակ գտնուող լեզուների ատլասում» համշիներէնի վերաբերեալ առկայ է «բացայայտ վտանգի տակ գտնուող» նշումը: «Վտանգը կանխելու» համար կարելի է համշիներէն դասընթացներ կազմակերպել, համշինահայերէնն ինչ-որ կերպ գրաւոր լեզուի վերածել, աւելի հասանելի դարձնել խօսքային եւ տեսողական միջոցներով: Կարելի է այս գործընթացում ապահովել համշինահայ մտաւորականների մասնակցութիւնը եւ յատկապէս պէտք է ապահովել:

**ՄԵԼԻՆԷ ԱՆՈՒՄԵԱՆ-** Ինչպէս յայտնի է, բազմաթիւ համշինահայեր, գլխաւորապէս խոպացի համշինցիներն

ընդգրկուած են ծախակողմեան շարժումներում: Որո՞նք են դրա պատճառները: Ուրիշ ո՞ր քաղաքական հոսանքներում են տեղ գտել համշինցիները:

**ՀԻՔՄԵԹ ԱՔՉԻՉԵՔ-** Սոյն հարցի վերաբերեալ մինչ այժմ որեւէ գիտական ուսումնասիրութիւն եւ վերլուծութիւն չի կատարուել: Խոպայի համշինցիների այդ հակումն առանձնապէս տարածուած չէ միւս համշինցիների մէջ: Օրինակ՝ 1778-79 թթ. ռուս-թրքական պատերազմի ժամանակաշրջանում Խոպայից Աղաբազար եւ Դիւզէ շրջաններ գաղթած համշինցիների մօտ, ընդհակառակը, առաւել տարածուած են թրքական ազգայնամոլութիւնը եւ իսլամական քաղաքական միտումները: Ռիզէի շրջանի համշինցիների մէջ եւս զգալիորէն մեծ տեղ են զբաղեցնում թրքական ազգայնական տեսակէտները:

Այս հարցում իմ անձնական մեկնաբանութիւնը հետեւեալն է. Խոպայի համշինցիների՝ ծախակողմեան հոսանքներին յարելու մէջ դեր է խաղացել նաեւ այն հանգամանքը, որ Համշին շրջանից համեմատաբար աւելի ուշ ժամանակաշրջանում (հաւանաբար մօտ 18-րդ դարում) Խոպա գաղթած համշինցիները պայքար են մղել տեղացի լազերի դէմ՝ տնտեսական, սոցիալական եւ քաղաքական կեանքում հաստատուելու համար: Դեռեւս 50-60 տարի առաջ Խոպայի համշինցիները առանձնապէս չէին կարողանում տեղ գրաւել Խոպայի սոցիալական եւ քաղաքական կեանքում: Այդ ձեւով նաեւ պետական հնարաւորութիւններն օգտագործելով՝ համշինցիներին տեղական տնտեսական, քաղաքական կեանքից, տեղական կառավարումից դուրս պահելը (առանձին անդրադարձի նիւթ է նաեւ այն, թէ այդ ուղղութեամբ պետութեան կամքը եւս եղել է, թէ ոչ) տեղիք է տուել, որ Խոպայի համշինցիների մէջ ձեւաւորուի ընդդիմադիր ինքնութիւն, որ նրանք լինեն տուժածի, արհամարհուածի, ճնշուածի կողքին, դէմ լինեն անիրաւացիութիւններին եւ անարդարութիւններին ու համակրանք տածեն իշխանութեանն ընդդիմադիր ծախակողմեան քաղաքական գաղափարների նկատմամբ եւ հանդէս գան որպէս այդ ուղղութեամբ պայքարող անձինք: Քանի որ Ռիզէի համշինցիները 780 թ. ի վեր նոյն տարածքում են ապրել (ի՞նչ Ռիզէյում է գտնուում բուն Համշինը՝ Համամաշենը- Մ.Ա.), այնտեղ նման խնդիր չկայ: Ինչ վերաբերում է Դիւզէ եւ Աղաբազար շրջաններին, ապա համշինցիներն այդ վայրերում նոյնպէս, միւսների համեմատ, տեղաբնակ ժողովուրդ են, որովհետեւ այս շրջաններ գաղթ է եղել Պալգաններից եւ Կովկասից:

**ԶԵՄԻ ԱՍՄԻ-** Քաղաքականութեան մէջ համշինցիների՝ ծախակողմեան շարժումների հանդէպ աւելի մեծ համակրանք տածելու պատճառները պայմանաւորուած են նրանց՝ պետութեան կողմից տնտեսական, սոցիալական եւ մշակութային առումներով արհամարհուելու, ճնշումների ենթարկուելու հանգամանքներով: Սակայն, ինչպէս բոլոր

ընդհանրացումների դէպքում, այս ընդհանրացման ժամանակ եւս պէտք է վերապահում արուի: Այս ընդհանրացումից չենք կարող հետեւութիւն անել, թէ անխտիր բոլոր համշինցիներն են ծախակողմեան: Ընդհակառակը՝ Սեւծովեան շրջանից այնպիսի վայրեր գաղթած համշինցիները, ինչպիսիք են Դիւզէն, Աքաբազար, Դիւզլար, Կատաղի թուրք ազգայնամոլներ են, եւ նրանցից շատերն այնպիսի անձինք են, ովքեր մասնակցութիւն են ունեցել պետութեան կեղտոտ գործերին: Քաղաքականութեան մէջ նրանց ունեցած դերերը տարբեր են՝ պայմանաւորուած այնպիսի գործունէրով, ինչպիսիք են նրանց ստացած կրթութիւնը, գործնական հնարաւորութիւնները, բնիկ թէ գաղթական լինելը:

**ԱՍԼԱՆ ԶԱՆՁԸ-** Այո՛, բազմաթիւ Համշինցիներ, գլխաւորապէս՝ Խոպայի համշինահայերը տեղ են գտել ծախակողմեան շարժումներում եւ դեռ շարունակում են յարել դրանց: Անշուշտ այս երեւոյթը պայմանաւորուած է զանազան հանգամանքներով: Ինքս կարծում եմ, որ իրականում նրանք ծախակողմեան մարքսիստական ուղեգիծ են որդեգրել պաշտօնական հանրութեան մէջ ընդունուած չլինելու եւ անընդհատ արհամարհում վիճակում գտնուելու պատճառով:

**ՄԵԼԻՆԷ ԱՆՈՒՄԵԱՆ- Երբեւէ այցելել էք Հայաստան: Արդեօք շփումներ ունէ՞ք Հայաստանի եւ Սփիւռքի հայերի հետ:**

**ՀԻՔՄԵԹ ԱՔՉԻՉԵՔ-** Հայաստան ենք եկել 2008 թ., Նարեկացի արուեստի միութեան կազմակերպութեամբ համերգ տալու նպատակով: 3 համերգ ենք տուել այնտեղ: Նոյն թուականին Երեւանում կայացել է նաեւ Համշին նուիրում մի գիտաժողով, որին գիտնականներ են մասնակցել նաեւ Թուրքիայից: Այդ կապակցութեամբ ծաւալուած մեր երկխօսութիւնը շարունակում է, իսկ բարեկամական կապերը՝ պահպանում: Յետագայ տարիներին Հայաստանից ժամանած որոշ ընկերների հետ հանդիպման առիթներ ենք ունեցել Թուրքիայում, մեր որոշ գիտնական բարեկամներ հիւրընկալուել են մեզ մօտ, եւ նրանց հետ միասին մի քանի անգամ հնարաւորութիւն ենք ունեցել շրջելու Խոպայի եւ Համշինի տարածքներում:

Թուրքիայում, յատկապէս «Ակոս» շաբաթաթերթում աշխատող որոշ հայ ընկերներն ունենք, սակայն երեւանեան համերգի շնորհիւ հաստատուած 1-2 կապերից բացի, ուրիշ որեւէ երկխօսութիւն չեն ունեցել սփիւռքահայերի հետ:

**ԶԵՄԻ ԱՍՄԻ-** Չնայած որ ընկերութիւն են անում Հայաստանի եւ Սփիւռքի բազմաթիւ հայերի հետ, սակայն, դժբախտաբար, բախտ չեն ունեցել Հայաստան այցելելու:

**ԱՍԼԱՆ ԶԱՆՁԸ-** Այո՛, մի քանի անգամ եկել եմ Հայաստան: Սփիւռքահայերի հետ եւս ծանօթանալու առիթ եմ ունեցել, երբ նրանք խմբով կամ անհատապէս այցելել են Թուրքիա:

**ՄԵԼԻՆԷ ԱՆՈՒՄԵԱՆ- 2013 թ. Սեպտեմբերի 30-ին Թուրքիայում իշխող Արդարութիւն եւ զարգացում կուսակցութեան կառավարութիւնը հրապարակեց «Ժողովրդավարացման փաթեթը»: Եթէ փաթեթում տեղ յատկացուէր նաեւ համշինցիներին, ապա ի՞նչ առաջարկութիւններով հանդէս կը գայիք դուք:**

**ՀԻՔՄԵԹ ԱՔՉԻՉԵՔ-** Փաթեթում հնարաւորութիւն է տրուում, որ բացի թրքերէնից, նաեւ քրդերէնը կրթութեան լեզու դառնայ մասնաւոր դպրոցներում: Մինչ այդ էլ քրդերէնը պետական դպրոցներում ընդգրկուել էր որպէս ընտրովի դաս: Մայրենի լեզուի դասաւանդումը եւ մայրենի լեզուով կրթութիւնը կամա-

յական կերպով սահմանափակելը հակառակ է մարդու իրաւունքներին: Մայրենի լեզուով կրթութիւնը եւ մայրենի լեզուի ուսուցումը մարդու հիմնարար իրաւունքն է:

Եթէ ես սպասում ունենայի կամ առաջարկ անէի փաթեթի առնչութեամբ, ապա դա կը լինէր դպրոցներում համշիներէնի ընդգրկումը, որը համշինցիների համար կը լինէր պարտադիր, իսկ միւս աշակերտների համար՝ ընտրովի, ինչպէս նաեւ՝ այդ կրթութեան համար անհրաժեշտ ենթակառուցուածքի երաշխաւորումը պետութեան կողմից: Ինչ վերաբերում է այն հարցին, թէ արդեօք համշիներէնը պէ՞տք է լինի համշինցիների ընդհանուր կրթութեան լեզուն, ապա սոյն խնդիրը մասնակարծութեան տեսանկիւնից առանձին քննուելու կարօտ մի հարց է, եւ անձամբ ինձ նման առաջարկն անիրական է թուում՝ Թուրքիայի առումով:

**ԶԵՄԻ ԱՍՄԻ-** Այդ փաթեթում կարող էր հետեւեալ յօդուածը տեղ գտնել. Արդվինում գործում է Չորուիի (Ճորոխի-Մ.Ա.) համալսարանը, եւ կ'առաջարկէի, որ այդ համալսարանի ենթակայութեան տակ Խոպայում հիմնուէր համշինական լեզուն ու մշակոյթն ուսումնասիրող որեւէ հաստատութիւն:

**ԱՍԼԱՆ ԶԱՆՁԸ-** Ճիշդն ասած՝ Արդարութիւն եւ զարգացում կուսակցութեան կառավարութեան կողմից 2013 թ. Սեպտեմբերի 30-ին հանրութեանը ներկայացուած «Ժողովրդավարացման փաթեթն» իրականում, հակառակ իր անուանը, հակաժողովրդավարական փաթեթ է: Ըստ էութեան խնդիրն այն է, որ ԱԶԿ կառավարութիւնը հասարակական ընդդիմութիւնը ճնշելու նպատակով է նման գործողութիւն ձեռնարկել: Հետեւաբար նման կառավարութեանը համշինցիների եւ համշինահայերի վերաբերեալ որեւէ առաջարկով հանդէս գալս գուր ջանք կը լինէր:

**ՄԵԼԻՆԷ ԱՆՈՒՄԵԱՆ- Ցանկանու՞մ էք որեւէ բան յաւելել:**

**ՀԻՔՄԵԹ ԱՔՉԻՉԵՔ-** Թրքաբնակ համշինցիների տեսակէտների, գաղափարների եւ զգացումների վերաբերեալ աւելի իրատեսական արդիւնքների հասնելու համար պէտք է տեղ յատկացնել նաեւ տարբեր քաղաքական գաղափարներ կրող եւ զանազան սոցիալ-մշակութային բնագաւառներ ներկայացնող անձանց տեսակէտներին: Դժբախտաբար հայ համայնքից սոյն խնդրի շուրջ ուսումնասիրութիւններ իրականացնող անձինք եւ հրատակարարութիւններ անող հաստատութիւնները աւելի շատ կարողանում են շփուել կրթուած, ծախակողմեան, սոցիալիստ, լիպերալ կամ դեմոկրատ մարդկանց հետ. հակառակը մտածող անձանց հանդիպելու հնարաւորութիւնները խիստ սահմանափակ են: Օրինորդ Մելիքէ, ինչպէս որ դուք էլ էինք ինձ յայտնել, այս հարցազրոյցին մասնակից միւս անձինք եւս իմ ընկերներն են, ովքեր կրում են վերը նշած յատկանիշները եւ, ընդհանուր առմամբ, մենք իրար նման մտածող մարդիկ ենք:

**ԶԵՄԻ ԱՍՄԻ-** Համշինական լեզուի եւ ինքնութեան պահպանումն ու զարգացումը միայն համշինցիների պարտականութիւնը չէ, ովքեր այն կ'ապահովեն իրենց աշխատանքներով: Հարկաւոր է հայաստանցի գիտնականների գլխաւորութեամբ այս ոլորտում համագործակցութիւն եւ մնայուն գործակցութիւններ զարգացնել՝ համայն աշխարհում համշինցիների շուրջ ուսումնասիրութիւններ:

**ԱՍԼԱՆ ԶԱՆՁԸ-** Շնորհակալ եմ՝ մտքերս արտայայտելու հնարաւորութիւն ընձեռելու համար:

Սերգեյ Վարդանյան  
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության  
ինստիտուտի գիտաշխատող

# Այդողան Թոփալի երգերը



«Հաղիզ» միությունում



Այդողան Թոփալ

Գալաշէ փէջօլ ա, օրթի՛,  
Արդէցուքնիյէ սըրփօղ ա,  
Ինծիգի օթօլ էնիս անա,  
Թաք քուքքու մէ գանջօղ չա:

Թուն շիմին վաան ասնիս անա,  
Լուսնիկա մէ փօսն էնգօղ ա,  
Մէդօղումին մէշնիվա, օրթի՛,  
Քէգի համա լուս էնօղ ա:

*Խոսքը և երաժշտությունը՝  
Եսքին Սաքարի և Այդողան Թոփալի:*

## Արտասուք (թարգմանություն)

Քա՛, դու ինձ համա՞ր ես, որդի՞,  
Լաց լինում, որդի՛, մի՛ լար, որդի՛,  
Ես այն աշխարհից չեմ գալու,  
Դու ծիծաղի՛ր, մի՛ լար, որդի՛:

Քամին փչելու է, որդի՛,  
Արտասուքներդ սրբելու է,  
Որ ինձ թողնես,<sup>3</sup>  
Մի կկու՛ էլ չի կանչի:

Դու որ շեմի վրայով անցնես,  
Լուսինը հայտնվելու է,  
Խավարի միջով, որդի՛,  
Քեզ համար լույս է անելու:

1. Քա - դիմելան իգական սեռին:
2. Օրթի - որդի, նշանակում է ընդհանրապես գավակ, տղա կամ աղջիկ:
3. Բնագրում՝ օթօլ էնիս, որը նշանակում է նաև լքես, մոռանաս, սրտիցդ հանես:
4. Համշենցիների համար կկվի կանչելը բնության զարթոնքի, գյուղատնտեսական աշխատանքները սկսելու ավետաբեր է, ուստի ուրախանում են կկվի ձայն լսելիս, իսկ քաղաքներում ապրողները գյուղացի ծանոթների հետ խոսելիս հետաքրքրվում են, թե կկուն կանչե՞լ է:

**Ի**ր մեղմ, հուզախառն ձայնով ու երգերով Թուրքիայի համշենցիների շրջանում լայն ճանաչում ու սեր վայելող երիտասարդ երգիչ Այդողան Թոփալին անձամբ չէի ճանաչում, թեև քանիցս եղել էի Արդվիհի նահանգի Խոփայի գավառի նրա հայրենի Հենդեք գյուղում, որտեղ բոլորը հպարտանում էին իրենց տաղանդավոր հայրենակցով: Նա 1982թ. ծնվել է Տրապիզոնում: 1999թ. ավարտելով Խոփայի լիսեյը 2000թ. ընդունվել է Ստամբուլի Անատոլիական համալսարանը և մնացել է Ստամբուլում: Այդողանը դեռևս մանկուց է տարվել երգ-երաժշտությանը, սովորել է լարային, ստեղնային, հարվածային նվագարաններ, հորինել է երգեր: Հետագայում տարբեր երաժշտական ժանրերի ելույթներ է ունեցել, բայց նրան ճանաչում բերեցին իր «Հեյամո» (2009թ.) և «Քուգեյ» (հյուսիս) (2012թ.) խոսակցական երգերը, որոնցում նա երգում է հայերեն համշենցակ,<sup>1</sup> թուրքերեն և լազերերն երգեր, որոնցից մի քանիսն ինքն է հորինել: Անցյալ տարի նրա մասին մի ռադիոհաղորդում էի պատրաստել, որը նա լսելով, համացանցով ինձ մի հուզիչ նամակ էր ուղարկել և իր երախտագիտությունը հայտնել: Եվ ահա, 2013թ. նոյեմբերի սկզբին, երբ Ստամբուլում մասնակցում էի իսլամացված հայերին նվիրված գիտաժողովին, ստամբուլաբնակ համշենցիների «Հաղիզ» միությունում կազմակերպված իմ հետ հանդիպմանը նա նույնպես եկել էր և ինձ նվեր էր բերել իր խոսակցական երգեր: Ծանոթացանք, ջերմորեն զրուցեցինք: Ի դեպ, նա երգում է նաև «Կարմատե» (լազերեն նշանակում է ջրաղաց) խմբում և համանուն խոսակցական երգում ունի համշենցակ երգ: Անհամբերությամբ սպասելով նրա նոր ստեղծագործություններին, այս անգամ մեր ընթերցողներին են ներկայացնում նրա երկու երգերի թարգմանությունները, քանզի հիշյալ ռադիոհաղորդման համացանցում տարածվելու շնորհիվ, Այդողան Թոփալը Հայաստանում ևս իր երկրպագուներն ունի և նրանք հաճախ են ինձ դիմում նրա երգերը արդի հայերեն թարգմանելու խնդրանքով:



## Սիյօ

Սիյօն էլավ, էրգէնցավ  
Ջէրմազ արջէն հէդնիվէ,  
Յէս ալ աման էրգէնօմ  
Իմ սէվդային հէդնիվէ:

Թուն էնթին ու յէս ասթիս,  
Մէնացաք այրի, այրի,  
Քէգի գարքօղ ուն դէյի,  
Ասէ մի ինծի բարի:

*Խոսքի և երաժշտության հեղինակներն անհայտ են, ասացել են Սաիթ Թոփալը և Հավվա Թոփալը:*

## Բաղեղ

(թարգմանություն)

Բաղեղը՞ էլավ, երկարեց  
Ճերմակ կաղամախու հետն ի վեր,  
Ես էլ այդպես երկարեմ,  
Իմ սիրածի հետն ի վեր:

Դու այնտեղ ու ես այստեղ,  
Մնացինք առանձին, առանձին,  
Որ քեզ ամուսնացնելու են,  
Գոնե՞ ինձ մի ասա:

1. Համշենցակ - Թուրքիայի հայախոս համշենահայերն իրենց խոսվածքն անվանում են համշենցակ:
2. Բնագրում՝ սիյօլ-բուսանուն է, թարգմանվում է պատուտակ, բաղեղ: Համշենցակ սիյօլ նշանակում է փաթաթվող, սիյուշ-փաթաթվել, գրկել, այստեղից էլ ծագել է այս փաթաթվող բույսի անունը: Պատատուկ - բաղեղը լինում է փաթաթվող կամ գետնատարած:

Տերները թաթածն են, սրտածն հիմքով,  
ծաղկաբույլերը՝ հովանոցածն: Մեր-  
ծարևադարձային անտառներում կարող են  
բարձրանալ մինչև 30 մետր: Անվան հոմանիշներն են՝ լիան, գեղծ, վրանածաղիկ,  
ծատր-ծաղիկ, պատաղիճ, մազցիկ, սողուկող,  
գետնասող, պատատարույս, ասպուզան,  
մամրիչ, շաղապատուկ և այլն: Պատատուկ-բաղեղն ունի 15 տեսակ:  
3. Բնագրում՝ բարի, թուրքերեն է, նշանակում է գոնե, ծայրահեղ դեպքում, գեթ, թեկուզ, միայն թե:

## Արդէցուք

Քա՛, թուն ինծի համա՞ թա, օրթի՛,  
Քուլաս օրթի՛, լա մի՛, օրթի՛,  
Յէս էգօղ չիմ ան աշխարան, օրթի՛,  
Թուն ծիծաղի, լա՛ մի, օրթի՛:



գ. Հենդեք

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝ ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ: Լրատվական գործունեություն իրականացնող՝ «ՀԱՄՇԵՆ» հայրենակցական-քաղաքական հասարակական կազմակերպություն: Գրասենյակ՝ Երևան-37, Ազատության 2, բն. 8: Հեռախոս՝ (+374+10) 20 21 26: Գրանցման վկայական՝ N 03Ա054979, տրված՝ 26.06.2002թ.: Խմբագրությունը ոչ միշտ է համակարծիք հեղինակների տեսակետներին: Արտատպության կամ մեջբերման դեպքում հղումը Ձայն համշենցակին՝ պարտադիր է: Գրատարակվում է 2004թ. օգոստոսից:

«ДЗАЙН АМШЕНАКАН» (ГОЛОС АМШЕНСКИЙ). Ежемесячная газета Земляческой благотворительной общественной организации «АМШЕН» (г. Ереван), Гл. редактор - СЕРГЕЙ ВАРДАНЫАН. Издаётся с августа 2004г. Газета распространяется бесплатно. Тел. 20 21 26. «HAMSHEN» Compatriotic-charitable public organization (Yerevan). «DZAYN HAMSHENAKAN». Issued from August, 2004. Editor in chief SERGEY VARDANYAN. Tel. (+374+10) 20 21 26, E-mail: dzaynhamshenakan@yahoo.com, www.dzaynhamshenakan.org